

Գ. Վարուժան, Սիամանթո, Մ. Շամտանճյան, Մ. Կյուրճյան, Ա. Մինասյան և Թեոդիկ, իր եզրակացության մեջ հիմնականում հաստատում է վերջին բանախոսի տեսակետը: Առավել հատկանշականը, սակայն, Գ. Խաժակի եզրափակիչ միտքն է. «Մինչև օրս հայ գրողներու նյութն ալ հայկական էր, լոկ մեր կյանքէն: Այսօր կուգանք ցուցնելու աշխարհին, որ համայն մարդկության համերգին, անոր փառահեղ ներդաշնակության մեջ մեկ նոթ մըն ալ մենք ունինք: Լեւ ժողովուրդը տվեց Սենքիւվիչներ, Միցքիւվիչներ: Նոյն փոքրիկ ազգը արտադրեց մարդկային հսկա հանճարներ: Ինչո՞ւ չենթադրել, որ մենք ալ կրնանք տալ համամարդկային գրականության մեր լուման, մեր բաժինը»: Ահա հենց սա էր 10-ական թվականների արևմտահայ գրական շարժման իմաստն ու բովանդակությունը, այդ ընդհանուր մտայնության արտահայտությունն էր նաև Շանթի «Հին աստվածները» որպես «համաշխարհային նյութի Հայ պատկերացում»:

Պոլսի գրական ասուլիսներում առհասարակ նկատելի է մի օրինաչափություն. ընթացիկ գրական երևույթները վերլուծվում են առավելապես որպես ինքնին արժեքներ, քանի որ շարունակվող ընթացքի մեջ դեռևս վերջնականապես որոշված չէ դրանց տեղը, իսկ նախորդ շրջանի երևույթներն արժեքավորվում են ոչ միայն գեղարվեստական, այլև գրական-պատմական տեսանկյունից: Հենց այս սկզբունքով էլ բանախոսները մոտենում են Զոհրապի գրական ժառանգությանը:

Գրողի ստեղծագործական նկարագիրը, նրա ուղղությունն ու գեղարվեստական սկզբունքները որոշակի ժամանակաշրջանի, որոշակի գրական միջավայրի ու գաղափարախոսության արդյունք են համարում Վահան Թեքեյանը և Գ. Խաժակը: Զոհրապի ստեղծագործությունը, ինչպես նկատում է Թեքեյանը, անխզելիորեն կապված է 80-ականների փայլուն սերնդի գործունեության հետ, որ, բանախոսի կարծիքով, առաջին անգամ արևմտահայ գրական շարժման մեջ ներկայացնում է ձևավորված հոսանք՝ «Ֆրանսիական իրապաշտ գրականության ազդեցության տակ»: Այդ հոսանքը խորապես ազդել է հայ հասարակական ու գրական կյանքի վրա՝ հիմնականում երեք ուղղությամբ՝ աշխարհաբար լեզու «ժողովրդասեր ու ժողովրդավար» ոգի